ՄԱԾՐ ՀԱՅՐԵՆԻՔՈՒՄ

ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԹԻ ԱՐՁԱՆԻ ԲԱՑՈՒՄԸ

Դեկտեմբերի 3-ին, հինգշաբթի օրը, Երևանի նորակերտ քաղաքային կայարանի հրապարակում, խուռն բազմության, կառավարական ղեկավար աշխատողների, գրականության, արվեստի գործիչների ներկայության կատարվեց հայ ժողովրդի լեգենդար հերոս, մեր ազգային անկախության և ինքնուրույնության քաջամարտիկ՝ Սասունցի Դավթի արձանի բացումը։

Սասունցի Դավիթը հայ ժողովրդի բազմադարյան ազատագրական մաքառումների, հերոսական պայքարի, հայրենասիրության ու ժողովրդասիրության խորհրդանշանն է։

Սասունցի Դավիթը հայ ժողովուրդն է, արի և բարի, հայրենասեր և հումանիստ իր խոհերով և երազներով։

Սասունցի Դավթի արձանի բացմանը նվիրված միտինգում սրտագին խոսքերով առաջինը հանդես է գալիս Երևանի քաղաքային Սովետի գործադիր կոմիտեի նախագահ Գ. Փահլևանյանը։ Ապա երկու փոքր պիոներներ դանդաղորեն իջեցնում են արձանը պարուրող սպիտակ քողը։ Բազմահազար ժողովրդի նայվածքի առաջ բացվում է հոյակապ էպոսի հերոսի պղնձակոփ կոթողը՝ Սասունցի Դավիթը աշտանակած իր հրեղեն ձիուն՝ Քուռկիկ Ջալալուն, մերկացրած ազատության սուրը՝ թուր կայծակին, փոթորկի նման թշնամու վրա խոյանալիս։

Սասունցի Դավթի արձանի բացման առթիվ խոսք են առնում արվեստի, գրականության, ուսանողության և աշխատավորության ներկայացուցիչներ, ընդգծելով Սասունցի Դավթի կերպարի մեջ հայ ժողովրդի դարավոր պայքարը, մահու և կենաց կռիվը օտարերկրյա բռնակալների դեմ։

Արձանի հեղինակն է տաղանդավոր քանդակագործ Երվանդ Քոչարը, որը կարողացել է «ստեղծել Սասունցի Դավթի գաղափարապես նպատակասլաց և գեղարվեստորեն արտահայտիչ դինամիկ կերպարը։ Նրա մեջ մենք տեսնում ենք ժողովրդի դարավոր երազանքը իրականություն դարձած»։ Սասունցի Դավթի արձանի բացման հանդիսության վերջում, ռեսպուբլիկայի վաստակավոր արտիստ Ժան Էլոյանը մեծ հուզմունքով արտասանում է «Սասունցի Դավիթ» էպոսից մի հատված։

ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԹԻ ԱՐՁԱՆԸ

(Քանդակագործ Երվանդ Քոչար)